
ԲԱՌԱԿԱԶՄԱԿԱՆ ՊԱՏՃԱՌԱԲԱՆՎԱԾՈՒԹՅԱՆ ՈՒՂՂՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ
ԵՎ ՏԵՍԱԿՆԵՐԸ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՀԱՅԵՐԵՆԻ ԲԱՂԱԴՐՅԱԼ ԲԱՌԵՐՈՒՄ

ՄԱՆՈՒԿ ՖԵԼԵՔՅԱՆ

Ինչպես հայտնի է, նույնարմատ բառերը կարող են գտնվել պատճառաբանված կապի մեջ: Պատճառաբանվածությունը կամ մոտիվացիան բառի հնչման և իմաստի պատճառաբանված կապն է: Պատճառաբանվածությունը լավ է երևում բաղադրյալ (ածանցավոր, բարդ, բարդածանցավոր բառեր, ինչպես նաև բառակապակցություններ) կառույցներում, քանի որ դրանց նշանակությունները գրեթե միշտ կարելի է բացատրել այդ բառերի (կամ բառակապակցությունների) բաղադրիչների իմաստներով: Լեզվական պարզ միավորների պատճառաբանվածությունը հստակ չի գիտակցվում, այսօր մթազնած է: Սրանք կարող են պատճառաբանվել միայն արդեն գոյություն ունեցող բառերի իմաստների փոփոխությամբ (մեծ մասամբ փոխաբերությամբ և փոխանունությամբ):

Պարզելու համար, թե պատճառաբանական հարաբերության մեջ գտնվող բառերից ո՞րն է մյուսի համար հիմք հանդիսացել, պետք է հաշվի առնել իմաստաբանական և ձևային մի շարք հատկանիշներ²:

1) Երկու նույնարմատ բառերից պատճառաբանված է նա, որն ունի առավել բարդ կառուցվածք, այսինքն՝ որում, բացի միևնույն արմատից, կարելի է

¹ Է. Դ. Բ. Աղ ա յ ա ն. *Ընդհանուր և հայկական բառագիտություն*, Երևան, 1984, էջ 30: Ա. Մ. Ս ու թ ի ա յ ա ն. *Ժամանակակից հայոց լեզու*, Երևան, 1999, էջ 102:

² Грамматика современного русского литературного языка. М., 1970, с. 38 («Բառակազմություն» գլխի հեղինակներից մեկը Բ. Ուլուխանովն է); И. С. У л у х а н о в. Словообразовательная семантика в русском языке. М., 1977; С. У л ь м а н н. Семантические универсалии.— Новое в лингвистике, вып. V. М., 1970; В. Н. Н е м ч е н к о. Словообразовательная структура имен прилагательных в современном русском языке. Горький, 1973, с. 22–26. В. Г. Г а к. Сопоставительная лексикология. М., 1977, с. 34–37; С. С. М а с л о в а - Л а ш а н с к а я. Из заметок по шведской лексикологии.— Ученые записки Ленинградского университета. Серия филологических наук, вып. 42. Л., 1958. *Հայերենի բաղադրյալ բառերում պատճառաբանվածության ուղղությունը որոշելիս հիմնականում հետևել ենք Բ. Ուլուխանովի առաջարկած սկզբունքներին:*

առանձնացնել ավելի շատ թվով իմաստակիր և ձևական միավորներ, ինչպես՝ գետ → գետակ (գետ + ակ), դեղին → դեղնավուն (դեղին (ի) + ավուն), ագահ → ագահաբար (ագահ + արար), դասավորել → վերադասավորել (վեր(ա) + դասավորել), պոկել → պոկոտել (պոկ + ոտ + էլ) և այլն:

Նույնարմատ և իմաստային առնչակցություն ունեցող բառերից կազմությամբ առավել պարզը կարող է պատճառաբանված լինել առավել բարդով միայն այն դեպքում, երբ պարզ բառի բառային իմաստն ամբողջությամբ ներառում է բարդին (երբ պարզ բառը մեկնվում է բարդով և ոչ թե հակառակը): Այս երևույթը նկատելի է արմատական բայանուն գոյականների բացատրության ժամանակ, ինչպես՝ էտ – էտել. հայերենի բացատրական բառարանները էտել բայը էտ գոյականով չեն բացատրում (ասենք, «էտ կատարելը, էտի գործողությունը»), այլ ընդհակառակը՝ էտ «վազերի մատերը, ինչպես և ծառերի ավելորդ ճյուղերը էտելը (այս և հաջորդ բացատրությունների ընդգծումները մերն են – Մ. Ֆ.)՝ հատելը՝ կտրել-հեռացնելը»³, նաև՝ Աճ «կենսական պրոցեսի հետևանքով օրգանական մարմնի մեծանալը՝ աճելը, մարմնի զարգացում» (ԱՀԲԲ), Ավարտ «որևէ բանի վերջացնելը՝ ավարտելը» (ԱՀԲԲ), Կանգ «կանգնելը, կանգ առնելը» (ԱՀԲԲ), Կիթ «1. Ինչ որ կթվում է, կթվածք: 2. Կթելը» (ԺՀԼԲԲ), Հունձ «1. Հնձելը, քաղելը» (ԺՀԼԲԲ), Վար «հողը վարելը, գութանով կամ արօրով հողը փորելը ցանելու համար, հերկ» (ՀԲԲ) և այլն:

2) Միննույն հիմքով (արմատով) կազմված այն բառազույգերում, որոնք ունեն հավասար թվով իմաստակիր միավորներ, պատճառաբանված է այն բառը, որն ունի իմաստային առավել մեծ բարդություն: Օրինակ՝ շվեդացի (շվեդ + ացի) և շվեդուհի (շվեդ + ուհի). երկուսն էլ ունեն երկուական բաղադրիչ և կազմված են «գոյական հիմք + գոյականակերտ վերջածանց» կաղապարով) բառազույգում պատճառաբանված է երկրորդը, որն իր մեջ ամբողջությամբ ներառում է առաջինի իմաստը. շվեդուհի «շվեդացի կին» (ԺՀԼԲԲ)*, համեմատիք նաև՝ նորվեգացի – նորվեգուհի, մարզիկ – մարզուհի, բայանուն գոյականներում՝ վազել – վազք [նշանակում է «վազելը, վազելու գործողությունը» (ԱՀԲԲ)], բաժան(վ)ել – բաժանում [նշանակում է «բաժանելը, բաժանվելը» (ԱՀԲԲ)] և այլն:

3) Բառային նշանակությունների հոմանիշության կամ նույնության դեպքում բայ – բայանուն՝ գործողություն ցույց տվող գոյական, նույնարմատ գույ-

³ Բացատրությունները բերված են ըստ հետևյալ բառարանների՝ Է. Գ. Ադամյան. Արդի հայերենի բացատրական բառարան (այսուհետև՝ ԱՀԲԲ), հ. 1–2, Երևան, 1976, Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան (այսուհետև՝ ԺՀԼԲԲ), հ. 1–4, Երևան, 1969–1980, Մ. Մ ա լ ի ա ս ե ա ն ց. Հայերեն բացատրական բառարան (այսուհետև՝ ՀԲԲ), հ. 1–4, Երևան, 1944–1945:

գերում (սահման(վ)ել – սահմանում, ընտր(վ)ել – ընտրում, ընտրություն, զգվել – զգվանք, փակել – փական, սուզ(վ)ել – սուզակ և այլն), անկախ իմաստակիր միավորների քանակից, միշտ պատճառաբանող է բայը, իսկ պատճառաբանվածը՝ գոյականը, քանի որ գործողության իմաստը հենց բայի խոսքիմասային (կարգաբանական) իմաստն է և ոչ թե գոյականի⁴, ինչպես՝ զգվել – զգվանք, փակել – փական, սուզ(վ)ել – սուզակ, սահման(վ)ել – սահմանում, ընտր(վ)ել – ընտրում, ընտրություն և այլն: Նմանապես բայ – ածական նույնարմատ այնպիսի գույգերում, որոնց իմաստակիր բաղադրիչների քանակը նույնն է, եթե ածականն ունի «նախատիպի արտահայտած գործողությամբ բնորոշվող հատկանիշի իմաստ», ապա պատճառաբանողն է բայը (գործողություն ցույց տալը բայի կարգաբանական իմաստն է), ինչպես՝ սագել – սագական «սագող, հարմար, համապատասխան» (ԱՀԲԲ), կիրառել – կիրառական «գուտ գործնական նշանակություն ունեցող, գործնականում կիրառվող» (ՄՀԼԲԲ), ճչալ – ճչան «տեղի-անտեղի ճչացող, ճվճվան, ճղճղան» (ԱՀԲԲ), պլպլալ – պլպլան «պլպլացող» (ԱՀԲԲ), կծել – կծու «2. փխբ. կծող, խայթող, վիրավորող, հեզնական (խոսք)» (ԱՀԲԲ), գրավել – գրավիչ «ինչ որ ընդունակ է գրաւելու՝ դէպի ինքը ձգելու՝ հրապուրելու» (ՀԲԲ), երերալ – երերուն «1. երերացող, տարուբերվող» (ԱՀԲԲ) և այլն: Եվ հակառակը, նման գույգերում եթե բայն ունի որևէ հատկանիշով օժտվելու, հատկանիշի վերածելու, փոխարկվելու նշանակություն, պատճառաբանված է ածականով (հատկանիշ ցույց տալը ածականի կարգաբանական իմաստն է), օրինակ՝ երջանիկ – երջանկանալ «երջանիկ դառնալ, իրեն երջանիկ զգալ» (ԱՀԲԲ), էժան – էժանանալ «էժան դառնալ, գինը իջնել» (ՄՀԼԲԲ), չեչոտ – չեչոտել, չեչոտվել, չեչոտանալ «չեչոտ դառնալ» (ԱՀԲԲ) և այլն:

Բառակազմական բնում (փնջում) բառերը կարող են գտնվել տարբեր հարաբերությունների մեջ, որոնց հիման վրա էլ կարելի է առանձնացնել բառային պատճառաբանվածության հետևյալ տեսակները⁵:

⁴ Հմմտ. Русская грамматика, т. I. М., 1980, с. 131–132 («Բառակազմություն: Հիմնական հասկացություններ» բաժնի հեղինակը Բ. Ուլուխանովն է); И. С. Улуканов. Словообразовательная мотивация и ее виды.– Известия АН СССР, серия литературы и языка, вып. I, т. XXX, 1971, с. 37–46.

⁵ Հմմտ. И. С. Улуканов. Словообразовательная мотивация и ее виды, с. 37–46. С. Ульманн. Նշվ. աշխ., էջ 225, В. Г. Гак. Նշվ. աշխ., էջ 34–37, Т. Р. Кияк. О видах мотивированности лексических единиц.– Вопросы языкознания, 1989, № 1, с. 100–102; Ս. Գալստյան. Ժամանակակից հայոց լեզվի գործնական աշխատանքների ձևերի, Երևան, 2003, էջ 104 [«Բառակազմության ներածություն (հիմնական հասկացություններ)» բաժնում]:

1) Լեզվի համակարգում բառերը կարող են ունենալ բացարձակ (արտաքին) և հարաբերական (ներքին) պատճառաբանվածություն: Երբ բառի իմաստն անմիջականորեն պայմանավորված է օբյեկտիվ իրականության երևույթների արտացոլմամբ, ունենք բացարձակ կամ արտաքին պատճառաբանվածություն: Սա կոչվում է նաև հնչյունական պատճառաբանվածություն և համեմատաբար քիչ է տարածված ժամանակակից լեզվում: Սրանք ձայնարկություններն ու բնաձայնություններն են, մի մոտեցմամբ՝ նաև դրանց հիման վրա ստեղծված բառերը (չրըխկ, դրըխկ, զընգ, տըզզ և չրխկոց, դրխկալ, զնգալ, զնգոց, տզզոց, նաև վա յ – վայել, ա իս – աիս քաշել, օ ֆ – օֆ անել և այլն): Հարաբերական կամ ներքին պատճառաբանվածությունն ունի երկու հիմնույթ՝ ձևային պատճառաբանվածություն և իմաստաբանական պատճառաբանվածություն: Հարաբերական մոտիվացիայի ժամանակ բառերի իմաստները պատճառաբանվում են լեզվում արդեն գոյություն ունեցող այլ բառերի (արմատների) միջոցով: Ձևային պատճառաբանականի դեպքում բառիմաստը մեծ մասամբ բխում է բաղադրյալ բառի առանձին ձևայինների իմաստներից, դրանց հանրագումարն է: Այսպես, ձևային պատճառաբանվածություն ունեն հետևյալ օրինակները՝ կչկչան, փնթփնթան, զնգզնգան, բզզան, խշշան. «բնաձայնական բառ + -ան վերջածանց (ածականակերտ կիրառությամբ)» = «նախատիպի ցույց տված ձայնային հատկանիշը ունեցող», թխվածքեղեն, գոհարեղեն, բրդեղեն, մետաքսեղեն, բուսեղեն. «գոյական + -եղեն վերջածանց (գոյականակերտ կիրառությամբ)» = «նախատիպի նշված առարկայի կամ նրա ցույց տված նյութից պատրաստված առարկաների տեսակային ամբողջություն», հայուհի, չինուհի, վանուհի, եվրոպուհի, պարուհի, կինոդերասանուհի, ինժեներուհի, աշխատակցուհի, կայսրուհի. «գոյական (հասարակ կամ հատուկ) + -ուհի վերջածանց» = «անձի անուն՝ իգական բնական սեռի նշանակությամբ», նույն ածանցը ածականներից կազմում է «նախատիպի ցույց տված հատկանիշը ունեցող կին» նշանակությամբ գոյականներ («ածական» + -ուհի»), ինչպես՝ ծանոթուհի, գեղեցկուհի, օտարուհի, համեստուհի, քաղբեւուհի, լրբուհի: Իմաստաբանական պատճառաբանվածությունը լավ երևում է բառակազմական շղթայում: Յուրաքանչյուր օղակի նախորդ բառը իր իմաստներից մեկով կամ մի քանիսով (հազվադեպ՝ բոլոր իմաստներով) մտնում է հաջորդ նոր կազմված բառի մեջ, ինչպես՝ խանդ «հոգեկան տանջալից ապրում՝ հուզում մեկի հավատարմության՝ նվիրվածության՝ սիրո նկատմամբ ունեցած կասկածից կամ փաստից» → խանդոտ «խանդի զգացում ունեցող, հեշտությամբ խանդի ազդեցության ենթարկվող» → խանդոտություն «1. Խանդոտ լինելը: 2. Խանդոտի հատկանիշը» կամ՝ հույզ «հոգեկան ապրում, զգացմունք» → հուզական «1. Հուզվող, բուռն հուզմունք՝ հույզեր ապրող, ալեկոծ-

վող: 2. Բունն հույգեր պարունակող՝ արտահայտող» → հուզականորեն «հուզական կերպով» և այլն:

2) Լեզվաբանական գրականության մեջ ընդունված է նաև պատճառաբանվածության բաժանումը ուղղակի և անուղղակի տեսակների: Ուղղակի պատճառաբանվածության դեպքում բառը կազմող բաղադրիչները լեզվում գոյություն ունեն, կիրառվում են ինքնուրույնաբար, ազատ են: Այդպես է բաղադրյալ բառերի մեծ մասում՝ ծովակ «փոքր ծով (ըստ -ակ ածանցի նվազական նշանակության)», գրիչ «գրելու գործիք (ըստ -իչ ածանցի նշանակություններից մեկի)*: հապճեպորեն «հապճեպ կերպով (ըստ -որեն ածանցի նշանակության)», դասական, բնորոշի, ամառային, նաև ճաշասեղան, դասասենյակ, հովանոցաձև, կապտակարմիր և այլն: Մրանց բաղադրիչները լեզվում գոյություն ունեն իբրև ինքնուրույն միավորներ (արմատական բառեր են և ածանցներ):

Անուղղակի պատճառաբանվածության դեպքում բաղադրյալ բառի միավորներից մեկը (արմատը կամ արմատներից մեկը, եթե բարդ բառ է) լեզվում ինքնուրույն միավոր չէ, կապված կամ կախյալ ձև է: Նման արմատ ունեցող բառերի իմաստները պատճառաբանում ենք ոչ թե ուղղակիորեն համեմատելով բաղադրյալ բառը և իր արմատը (ինչպես նախորդ դեպքում էր), այլ համեմատելով միևնույն արմատից կազմված բառերը միմյանց հետ: Բառահիմքի իմաստը մակաբերում ենք նույնարմատ բառերի շարքի ընդհանուր իմաստից ելնելով: Օրինակ՝ մարզել, մարզիչ, մարզիկ, մարզուհի, մարզական, մարզասեր, մարզագգեստ, մարզագույք, մարմնատարզիկ և այլն [մարզ արմատական բառ (որպես սպորտի հետ կապված հասկացություն) հայերենում չկա]: Նմանապես՝ պարծենալ, պարծանք, պարծենկոտ, սնտպարծ. հեզնական, հեզնանք, հեզնել, հեզնոտ, հեզնականորեն, հեզնաձայն, հեզնաժպիտ, հեզնախառն. գովել, գովական, գովելի, գովասանք, գովաբանություն, ինքնագով, գլուխգովան, գովերգել և այլն:

3) Անմիջական և միջնորդավորված պատճառաբանվածություն: Անմիջական պատճառաբանվածության դեպքում համադրվող գույգի բառերից մեկը մյուսից տարբերվում է միայն մեկ բառակազմական ձևորոշով (ֆորմանտով), ինչպես՝ կապույտ – կապուտակ (կապուտ (ույ > ու) + ակ), բնագո – բնագոային (բնագո + ային), տասնհինգ – տասնհինգերորդ, գիր – գիրք, գրություն, գրական, գրային, գրիչ, գրասեր, ձեռագիր, գրամոլ, սրահ – սպասարահ (սպաս(ա) + սրահ), քաղաք – մայրաքաղաք, քաղաքամայր և այլն: Միջնորդավորված (ոչ անմիջական) պատճառաբանվածության ժամանակ բառակազմական փնջում բաղադրյալ բառը տարբերակվում է գլխաբառից մեկից ավելի ձևորոշներով. անմիջականորեն չի կազմվում վերջինից, ինչպես՝ գիր →

գրական → գրականություն (-ական և -ություն ձևորդներ), կամ՝ գիր և դասագրքային. միջնորդավորված է գիրք, դասագիրք կազմություններով. գիր → գիրք → դասագիրք → դասագրքային (-ք, -ային և -դաս/ա ձևորդներ), ազգ և ազգայնամուլականություն. ազգ → ազգային → ազգայնամուլ → ազգայնամուլական → ազգայնամուլականություն (-ային, -մուլ, -ական ձևորդներ) և այլն:

Պատճառաբանված բառի նշանակությունը միշտ էլ բացատրելի է իր անմիջական պատճառաբանող բառի իմաստով⁶: Միջնորդավորված պատճառաբանվածությունը բառերում իմաստի բացատրությունը բառակազմական փնջի գլխաբառի (կամ այլ ոչ անմիջական բաղադրիչի) միջոցով մեծ մասամբ հնարավոր չէ: Այսպես, ժանգ → ժանգոտ → ժանգոտել շարքում բայը անմիջականորեն պատճառաբանված է ածականով, իսկ միջնորդավորված ձևով՝ գոյականով: Ժանգոտել բայի իմաստը կարելի է բացատրել և «ժանգոտ դառնալ (ժանգոտ լինելու հատկանիշ ձեռք բերել)» և «ժանգով պատվել, վրան ժանգ բռնել»: Առաջին դեպքում մենք կունենանք բառակազմական ճշգրիտ բացատրությունը (դենտատոր ձիշտ է արտացոլված բառում): Երկրորդ դեպքում ոչ այնքան համարժեք բացատրություն, որը, այնուամենայնիվ, ձիշտ է արտահայտում իրականությունը:

Մինևույն արմատից կազմված, մեկ բառակազմական փնջի մեջ մտնող, նույն գործողությունն արտահայտող ածականահիմք և գոյականահիմք բայերն ունեն բառակազմական տարբեր իմաստներ, որն էլ հիմք է հանդիսանում դրանց բառային նշանակությունների զանազանման համար: Համեմատենք որդնոտել և որդնել բայերը: Առաջինը կազմված է որդնոտ ածականից և ունի «որնէ (տվյալ դեպքում որդնոտ լինելու) հատկանիշ ձեռք բերելու, որնէ հատկանիշով օժտվելու» բառակազմական նշանակությունը: Երկրորդը գոյականահիմք է և ունի «մի բան ունենալու, մի բանով (տվյալ դեպքում՝ որդ(եր)ով) պատվելու» բառակազմական նշանակությունը: Հմմտ. նան ձյութել – ձյութոտել, մումել – մումապատել (և՛ «մումով պատել», բայց և՛ «մումապատ դարձնել») և նման կառույցները:

4) Միակ և բազմակի պատճառաբանվածություն: Միակ պատճառաբանվածության դեպքում բառն ունի միայն մեկ նախահիմք, բացատրվում է միայն մեկ բառով: Այսպիսի պատճառաբանվածություն ունեցող բաղադրյալ բառերը կազմում են մեծամասնություն: Օրինակ՝ լճափ < լճ (<լիճ)+ափ «լճի ափ», նրբատաշ < նրբ (<նուրբ)+ա+տաշ (տաշել) «նուրբ տաշած», աներորդի < աներ (աներոջ)+որդի «աներոջ որդին», կարծրանալ < կարծր+անալ «կարծր դառնալ» (ըստ -անալ բայակերտ ածանցի «մի որնէ հատկանիշով օժտվել, այդ

⁶ Հմմտ. И. С. Улуханов. Словообразовательная семантика в русском языке, с. 39–40.

հատկանիշին վերածվել, փոխակերպվել» բառակազմական նշանակության), բայական < բայ+ական «բային հատուկ, բային վերաբերող, բայի» (ըստ -ական ածանցի «նախատիպ գոյականին հատուկ՝ վերաբերող» ընդհանուր բառակազմական նշանակության), գետակ < գետ+ակ «փոքր գետ» (ըստ -ակ նվազական ածանցի իմաստի) և այլն: Այսպիսի բառերը լեզվաբանական գրականության մեջ անվանվում են միակառուցվածք կամ մեկ պատճառաբանվածություն ունեցող (միապատճառաբանված) բառեր:

Բազմակի պատճառաբանվածության դեպքում բաղադրյալ բառը կարող է ունենալ մեկից ավելի պատճառաբանող հիմքեր: Բառի կազմությունը հնարավոր է լինում բացատրել տարբեր եղանակներով: Ասենք, անպատվաբերություն գոյականը կարող է ընկալվել թե՛ իբրև վերջածանցավոր կազմություն (անպատվաբեր + ություն. բառակազմական վերջին քայլում ավելացել է վերջածանց), և թե՛ իբրև նախածանցավոր բառ (ան + պատվաբերություն. վերջին քայլում ավելացել է ան- նախածանցը): Վերակազմավորում բառի կազմությունը նույնպես ունի երկակի մեկնություն. այն կարող է ընկալվել իբրև կազմավորում բայանուն գոյականից կազմված նախածանցավոր բառ՝ վերա+կազմավորում («վերստին՝ կրկին՝ նորովի կազմավորում»), բայց նաև վերակազմավորել կամ վերակազմավորվել բայերից՝ -ում ածանցով՝ վերակազմավոր((վ)ել)+ում («վերակազմավորելը, վերակազմավորվելը, վերակազմավոր(վ)ելու գործողություն կատարելը»): Անբարյացակամորեն մակբայի բառային կառուցվածքը կրկին երկակի է՝ անբարյացակամ+որեն «անբարյացակամ ձևով» և ան+բարյացակամորեն «ոչ բարյացակամորեն»:

Կան դեպքեր էլ, երբ բազմակի պատճառաբանվածություն ունեցող բառը կազմվում է ոչ թե բառակազմական տարբեր եղանակներով, այլ ուղղակի տարբեր հիմքերից, ինչպես, ասենք, բայանուն գոյականների դեպքում է, որոնք կարող են կազմվել նույնարմատ թե՛ չեզոք, թե՛ ներգործական (պատճառական), թե՛ կրավորական բայերից: Օրինակ՝ բարձրացում «բարձրանալը, բարձրացնելը, բարձրացվելը»: Կամ, ասենք, հաչոց բառը կարող է կազմված լինել նույն հիմք-բառի երկու տարբերակներից (հաչել → հաչոց և հաչալ → հաչոց) և այլն⁷:

5) Կանոնավոր և ոչ կանոնավոր պատճառաբանում: Կանոնավորի դեպքում բառը պատճառաբանվում է հաճախ կրկնվող, լեզվում շատ տարածված, ոչ ունիկալ (հազվագյուտ) բառակազմական միջոցներով: Մրանք կանոնավորապես կրկնվում են նմանատիպ կառույցներում: Ասենք, հայերենի -անալ ածանցով բայեր են կազմվում բազմաթիվ (գրեթե բոլոր) արմատական որակա-

⁷ Բազմակի պատճառաբանվածության մասին տե՛ս Ս. Տի ո յ ա ն. Բառակազմական բազմակի պատճառաբանվածությունը ժամանակակից հայերենում, Երևան, 2013:

կան ածականներից («նախահիմքի ցույց տված հատկանիշը ձեռք բերել» բառակազմական նշանակությամբ), օրինակ՝ կարճանալ «կարճ դառնալ», կորանալ «կոր դառնալ», մեծանալ «մեծ դառնալ», մեղմանալ «մեղմ դառնալ» և այլն, և այլն: Կամ նույն ածականներից -ություն վերջածանցով կանոնավորապես հնարավոր է կազմել «հատկանիշի վերացական հասկացություն» բառակազմական նշանակությամբ գոյականներ. կարճություն «կարճ լինելը», կորություն «կոր լինելը», մեծություն «մեծ լինելը», մեղմություն «մեղմ լինելը» և այլն, և այլն:

Սակայն լեզվում կան բաղադրյալ բառեր, որոնց կառուցվածքը եզակի է: Դրանցում կան բաղադրիչներ, որոնք այլ կառույցներում խիստ հազվադեպ են հանդիպում կամ ուղղակի չեն հանդիպում: Օրինակ՝ նավաստի բառում մենք հեշտությամբ առանձնացնում ենք երկու բաղադրիչներ՝ նավ- և -(ա)ստի: Պարզ է, որ բառը պատճառաբանվում է՝ նավ գոյականով, ցույց է տալիս նրա հետ կապված ինչ-որ հասկացություն [«հրամանատարական կազմին չպատկանող ծովային, նավատորմի շարքային զինվոր կամ քաղաքացիական նավերի ծառայող» (ԱՀԲԲ)], սակայն քանի որ - (ա)ստի վերջածանցը այլ կառույցներում չի հանդիպում, մենք ունենում ենք ոչ կանոնավոր պատճառաբանվածություն, մեծի «բավականին մեծ» (-դի < -ողի ածանցը այլ բառերում չի հանդիպում), նմանապես՝ ցանցվեն, մատղաշ, խաղաղվուն, առհավատյալ և այլ անարտադրողական ածանցներով կազմությունները: Կամ՝ արշալույս բառը ակնհայտորեն բաղադրյալ է, սակայն քանի որ արշա- կամ արշ- (եթե նախորդի ա-ն հոդակապ է) ձևությամբ այլ բառերում չի հանդիպում, մենք չենք կարող պարզել բառի պատճառաբանված իմաստը (այն մթագնել է), իսկ բառն ունի ոչ կանոնավոր պատճառաբանվածություն:

Այսպիսով, բաղադրյալ բառերի պատճառաբանվածության ուղղությունը որոշելու համար կարևոր են բառի ձևությամբ կազմը, բառակազմական կաղապարը, իմաստաբանությունը: Իսկ ըստ պատճառաբանվածության տեսակի՝ հայերենի բաղադրյալ բառերը կարող են ունենալ բացարձակ (արտաքին) և հարաբերական (ներքին), ուղղակի և անուղղակի, անմիջական և միջնորդավորված, միակ ու բազմակի, կանոնավոր և ոչ կանոնավոր պատճառաբանումներ:

НАПРАВЛЕНИЕ И ВИДЫ СЛОВООБРАЗОВАТЕЛЬНОЙ МОТИВАЦИИ В
СОСТАВНЫХ СЛОВАХ СОВРЕМЕННОГО АРМЯНСКОГО ЯЗЫКА

МАНУК ФЕЛЕКЯН

Резюме

Для определения мотивации составных слов важны морфемный состав слова, его словообразовательная модель, семантика. В мотивационных отношениях составных слов современного армянского языка выделяются следующие виды: абсолютная (внешняя) и относительная (внутренняя) словообразовательная мотивация, прямая и косвенная, непосредственная и опосредованная, единственная и множественная, регулярная и нерегулярная мотивации.

THE DIRECTION AND TYPES OF DERIVATIONAL MOTIVATION IN MODERN
ARMENIAN COMPOUND WORDS

MANUK FELEKYAN

Summary

To determine the direction of derivational motivation we specify the morphemic structure, model and semantics of the word. By the type we distinguish absolute (external) and relative (internal), direct and indirect, immediate and mediated, single and multiple, regular and irregular motivations in Modern Armenian.